

ի հարկէ. սակայն ընդդիմաբանն լուսնած չէ
զայն, վասն զի բերած փաստերն ոչ պատմա-
կան են և ոչ հնախօսական, այլ ենթադրական,
զորո ինքն իրեն կը ներկայացնէ, կ'ընդունի
իրեւե մատենագրական փորձաշարեր, և ա-
նոնցով վտառահարառ ոչնչացած կը յայտարա-
րէ Հ. քննադատի եզրակացութիւնքը: Սակայն
մենք ի նկատի առնելով որ Բուզանդէն զսուր
ուրիշ յիշատակարան մի յայտնուած չէ և ուր
յիշուած լինին խնդրոյ նիւթ եղած եպիսկոպոս-
ները, նկատելով որ զոչոս վերաբերեալ Աղա-
թանգեղեայ տեղին — ինչպէս ուրիշ շատեր —
Ե զարու բնորշ հանգամանքներ աւելի կը ներ-
կայացնեն, քան Լուսաւորչի ժամանակակից,
կը համարակիինք ըսելու որ Պ. քննադատը նոր
քայլ մ'առած կամ լաւ եւս նոր բան յայտ-
նած չէ իւր այդ քննադատականով:

Անցնինք: Պալատ, Ալատ Աղւսթատ և այլն
վարիանդներն ուրիշ բան չեն՝ բայց եթէ հայ
մատենագրաց ընդհանուր կերպով ժամօթ Աղ-
լախնոս անուան զըջադրական խանգարաններ
ուստի զոչոս կարեւորութիւն ապրը, մանաւանդ
թէ փաստեր կազմել անոր չափազանց բարե-
որդութիւն է:

Ով կարդացած է Ձեներ զլակացւոյ Ցարոնի
պատմութիւնը, գիտէ թէ ոչ միայն Գրիգորի,
Ղեւոնդիսի, Ձեներոսի և այլ եպիսկոպոսաց
թղթակցութիւնք, այլ նոյն իսկ նմանիւնեան և
Արձանի պատերազմներուն, քրմաց քասակաւ-
դութեան և ծուխերու, և Ս. Գրիգորի ձեռքով
նոցա կարգաւորելոյն նկարագիրքն՝ այլովք հան-
դերձ՝ Գրիգորի գործունէութիւնը ցոյց կու տան
յետ զարքին և սակայն Տէր-Պօղոսեան հոռ
եւս մեծ նորութիւն մի կը յայտնէ իւր ընթեր-
ցողաց, ըսելով թէ « Ձեներ չի պատմել Ս. Գրի-
գորի գործունէութիւնը զկնի զարքին ». և թէ
այդ իսկ պատճառաւ Ձեներ յիշած չէ քրմա-
կան դատակարգութենէն ձեռնարդուած 12 ե-
պիսկոպոսները: Բայց երբ Սղիազար Տիմութեոս,
Բեկասը, Գայիոս և Անատանոս ստար եպիսկո-
պոսաց հետ՝ ՎԱՋԵԲԱՆՈՐ եւս կը յիշէ երկիցս
իրեն եպիսկոպոս, (առանց երկարակական կող-
մանց վերակացութեան յիշատակութեան) այսպ
ուրեմն Ձեներ առիթ առնելը յիշելու միւս 14
եպիսկոպոսներն եւս, եթէ նոքա Փրիգորի
կենդանութեան ժամանակ և ձեռք ձեռնա-
դրուած և այլեւայլ կողմերու վրայ եպիսկոպոս
կարգուած լինէին:

Աղբիւնոսի երթատական կողմերը վերա-
կացու կարգուելու մասին Աղաթանգեղոսի և
Փառաստոսի համաձայնութիւնը կատարեալ լի-

նելով, ուրիշ մը և է մեկնութիւն տալն աւել,
չորդ է: Թող թէ Փառաստոսի Գ զարեւութեան Գ
զլիւսու խանգարմանն ապահինել, զոր և ոչ իսկ
բանադատն վերադանդնել կարող եղած է:

Գիտելով որ Աղաթանգեղեայ նախնական և
համառօտ յոյն բնագիրը՝ պիտովն տարբեր էր
այժմեան կամ նոյն իսկ Ե զարու մ կատարուած
հայերէն խմբագրութիւնէն, զոր խնամքով ու-
սումնասիրած և ցոյց տուած է Հ. Բարսեղ Սար-
գիսեան: Գիտելով որ Բուզանդայ պատմութեան
նախկին և համառօտ բնագիրն եւս յունարէն
էր, ինչպէս կը ցուցնեն Արշակայ և Գրաստա-
մատի մասին հառող հատուածներն առ Պրիկ-
պիսի, ուրեմն բնաւ հակասական չէ՝ որ Աղա-
թանգեղեայ և Բուզանդայ հայ խմբագրողներն
իրարմէ փոխարարձ օժանդակուած ըլլան, մին
ըստ նախկին յոյն բնագրին. և միւսն՝ ըստ
վերջին խմբագրութեան. ուստի այս տեսակէ-
տով որոնց լաւ ուշ դրուած չէ և կ'ունենան Տէր
Պօղոսեանի ընդդիմախօսութիւնքը: և քննա-
դատ Հօր եզրակացութիւնքը կը մնան իրենց
սեփն մէջ. նոր և շուքիելի յայտնութիւնք
միայն կարող են փոխել զայն:



ԶԱՆԳԵՍ ԶԱՆԳԵՍՍԵՑ

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ԶԱՆԳԵՍ ԱՄՍՕՐԵԱՑ. — Հնագիտական
մի արձանագրութիւն (թղթակցութիւն Ար-
զարու և Վերիստոսի) որ ամիսներ առաջ եւրո-
պական և մեր մամոյ մէջ բաւական արձա-
գանդ ունեցաւ, նոյնը այդ « Հանդէս ամ-
սորեայ » թիւ 9, 10, 11, մէջ ընդ երկար
կուսումնասիրուի. Հ. Տաշեան վրդապ. այս
յօդուածին վերնագիր կը դնէ « Թղթակցու-
թիւն Արզարու և Վերիստոսի » ըստ նորագիտ
արձանագրութեան Եփեսոսի: Մենք « Բազ-
մավէպ »-ով՝ բանասիրաց համառօտ անդե-
կութիւն մը տուած էինք յիշեալ արձանա-
գրութեան մասին, արդ աւելորդ կը համա-
րինք երկրորդիւ և երկարաբանել: Հ. Տա-
շեան իր յօդուածով կը յայտնէ, որ:

« Արձանագրութիւնը ոչ մի կերպով Յիսուսի
ժամանակաց կը վերաբերի, ոչ ալ Արզարու

պատմութիւն մըն է, ուր իդիւթեր յիշուած բէ-
լան, այլ պարզապէս իդիւթերն են յունարէն լե-
զուաւ: յունիդէն քան Ն. սերեայ քով, որ հիմն
է արձանագրութիւնն »:

Արձանագրութիւնն « մեծ Հնախօսական
գիրտ մը՝ » չի ընդունիր. և իրաւցընէ « խախ-
կերեւոր և նշանաւոր » քան մըն ալ չէ, և
սակայն Պոնդման (Պոնդման կամ Բորման³⁾)
գիրտականէն սկսեալ, մինչև մեր բունստէրք
Հետարբերութեան նոյն արձանագրութեամբ,
և արդ Բարդ. Հ. Տաշեան Հմտութեամբ զայն
կ'ուսումնասիրէ և կ'աշխատի ապացուցանե-
լու որ այն արձանագրութիւնը պարզապէս
լեւսերեայ խմբագրութիւնն է՝ և քիչ մ'ա-
ւելի վատթարացած: « Հանդիսի » ամենէն
ուշագրաւ յօդուածն այս է: — Պ. Տէր-Պո-
ղոսեան՝ Փաւստոսի պատմութեան վերաբե-
րեալ շարայարելի նկատողութիւնները կը չա-
ռուանալ: Հ. Տաշեան Վ. ինչպէս նախորդ
« Հանդէս » ու՛ր խոստացած էր, ներկայ պրա-
կով կը հրատարակէ Սերասեայ իմաստասի-
րի խրատներն, բազմօթիւ ծանօթութեամբ:
— Ն. Բարդ թղթակցութեամբ մը ուսա-
հայ Հրապարակախօս գրագիրաց օտար բա-
ռեր գործածելուն դէմ կը գրէ. ինչդր մը
որ անլուծանելի մնացած է, թէ և թերթե-
րու մէջ շատ անգամ ջախջախուած է: Փա-
փոքելի էր որ արդիւնաւոր լինէր յօդուա-
ծագրի բողոքը. երբ մեր բառարաններէն բառ
մի կը պակսի, իրաւելի ունինք օտարէն զայն
մտարտուլ, բայց երբ նոյն բառին նոյն իսկ
մի քանի հոմանիշներն ունենալէն վերջը նո-
ւայն գրական մտարցականութեան դիմենք,
բայց անըմբռնելի օտարամտութիւն մըն է,
ի վնաս ազգային ինքուին և գրականութեան:
— Պ. Մելիք Ս. Դաւիթ-Բէկ կը շարունա-
կէ « Արարկիրի գաւառաբարբառ »-ի վրայ
իր լեզուարանական գեղեցիկ և օգտակար
յօդուածը. կը յիշատակէ տեղացի բարբա-
ռով առածներ, աստեթիւններ, անէճքներ,
աւելորդապաշտութիւններ, այրուքներ կար-
գաւ բառեր, որոնց ցանկէն զուր ձգուած
են այն բառերն, որոնք բոլորովին նոյն են
գրական լեզուին հետ՝ թէ նշանակութեամբ
և թէ արտասանութեամբ, նոյնպէս փոխա-
ռեալ բառերն չէ յիշած: Հակառակ այս
գրութեան, տեղ տեղ սպրդած են գրականու-

թեան մէջ գործածուած բառեր, ինչպէս ա-
զոխ, անիծ, գորդր, քրոսաշ, լաշ, լիզի, լու-
ղաշ, կէնշ, մար, բի, և այլն: — Պ. լեզուա-
գիրտ այս բառագիրտութեան մէջ, ծանօթ
գաւառաբարբառներէն զատ, կան նաեւ ան-
ծանօթ նոր ու Հետաքրքրական բառեր: Զոր
օրինակ Սլիսի, Սլիսած = կերակրող աւուրի-
լը և հօտիւր: Սլիսոր = սեխ: Բառն = հօր-
եղբայր, դրացի բոլոր էրիկ մարդիկ: Բափ
= ուտել: Զիբի = շարաբարոյ, դէշ: Զո-
րաթ = լրբորէն: — Բէշ 308, Հ. Տաշեան
Վ. « Ի մտեննախօսական շարայարելի յօ-
դուածով » վերջերս մեր տպարանէն լոյս տե-
սած « Վեցօրեայք Գեորգայ Պիրգեայ »
(լուսաբանեալ է Հ. Աթանաս Վ. Տիրոյեանէ)
իմաստասիրի հրատարակութեան մասին,
ամփոփ տեղեկութիւն կու տայ. համեմելով
զայն բանասիրական ծանօթութեամբ (շա-
րունակութիւնն տես նոյն Հանդիսի յաջորդ
գրակին մէջ թիւ 11): — Փաղաքական և
գրաբօսական մասերն Հետաքրքրութիւն չեն
շարժեր: ասոնցմէ զատ՝ միւս ամէն յօդուա-
ծներն խնամքով պատրաստուած են և ոմանք
Հմտոյից են և բանասիրաց ուշագրաւ:

NUOVA ANTOLOGIA. — Իտալական այս
ամենէն տաղանկարգ լուրջ Հանդէսը որ մեր
« Մուրծ »-էն քիչ մ'աւելի ընդարձակ ծաւա-
լով սովոր երկու անգամ կը հրատարակուի
ի Հռօմով. ներկայ տարւուան 16 Օգոստոսին,
կը հրատարակէ մի երկար յօդուած որ ճանա-
պարհորդութիւն մըն է՝ դէպ ի կովկաս, և
այդ յօդուածին մէջ մեր ազգայնոց մասին
բառական յիշատակութիւններ գտնելով, լաւ
կը համարինք համաօտակի ծանօթացընել
զայն մեր ընթերցողաց: Հանապարհորդողն
և նոյնպէս ճանապարհորդապիրն է Կուլիէլմօ
Փասարի: Պորէն մինչև Տրապիգոն ճանա-
պարհորդած Ժամանակ նախն մէջ իրեն կ'ըն-
կերանան ու թ զինուորական Թուրք պաշ-
տօնաւայ. անոնց բնառնութիւնէն կը Հետեւ-
ցընէ, որ քաղերն իրրեւ ասանձնակաւ ան-
ձինք՝ շատ բարագեղութիւն են պարզ և բնա-
նի, բայց իրրեւ Հասարակաց գաղտնիաններ
անտանելի է անոնց բնառնութիւնը: Տրա-
պիգոնը կը նկարագրէ պարսկապատ քաղաք
մը, և ճիշդ է Կուլիէլմոյի գրութիւնն, որ
բոլոր Սեւ ծովի քաղաքներն՝ հին ճինսկացոց

1. Նոյն, անդ:

2. Հանդէս ամսորեայ 1900. էջ 187:

3. Նոյն էջ 187 և 287:

4. Աճառի, Աճառ կամ Համառ բառով ոմանք

կ'իմանան Շէմս կոչուած Զեյթուն. Ամիր.
Սեւ կը հասնեայ. Ս. Կամրկապցի՝ վարուել
կը համարի:

պարիսպներով ամրացած են: Հեղինակն սնա-
փառութիւն մը կը զգայ իր Հին Հայրենա-
կիցներուն այն յաղթանդամ գործերն տես-
նելով, և որ իրաւացի է զանոնք իտալիոյ
փառք մը համարին: Բայց իր պարծանքն
աւելի գորութիւն մը պիտի ունենար, եթէ
այցեկէր Տրապիգոնի Ս. Փրօկի Հայ Վանքին՝
որ Ճննդագլոց ամենէն գեղեցիկ և ճարտա-
րապետական գործն է: Դանսպարկորդը տես-
նելով որ քաղաքին մեծ մասն իտալացւոց
շինած պարիսպներով ամրացած է, կը կարծէ
որ տեղացի ալլազգութիւնը բոլորովին ազէտ
պիտի չըլլայ իտալիոյ անուան և փառաց.
ուստի երկրորդ առաւօտ կ'ուզէ փորձ մ'ընել:
Կ'այցեկէ թուրք վարժարանի մը, որուն բա-
ւական կիրթ տեսունքն ամենամեծ յաղագք
ընդունելութիւն կ'ընէ: Կ'ուզէ յայտկերտա-
ներէն իմանալ իտալիոյ մի քանի քաղաքաց
անուններն . . . Բազմ յուններն անոնցմէ՝
Հոռոմիոյ անունն իսկ չտեսնու. կը խնդրէ որ
զոնէ իտալիոյ վրայ լսած ինչ լուր որ ունին
անոնցմէ մի քանին պատմեն, և գարձեալ ա-
մէնն ալ իրենց տգիտութիւնը կը խոտոտի-
նին: Այսպէս վարժապետը, կարծածով որ իր
աշակերտաց տգիտութեան պատճառաւ ստա-
րականը պզտիկ մնաց. կ'ըսէ. « Գիտէ՞ք, զեռ
մինչեւ այսօր Զուլիցերի ենք. գուցէ վաղը
իտալիան կը սկսինք »: Եւ իտալացիին կը
հեգնէ « Գիտէ՞ք, այսօր զեռ թուրքեայ մէջ
եմ. վաղը, իշալլա, Ռուսիոյ կայսրութեան
մէջ կ'ըլլամ »: Եւ երկրորդ օրը կը ճանա-
պարհորդէ դէպ ի Պաթում, անտի Տփղիս,
Պաքու, Մանրամասն տեղեկութիւն կու տայ
այն քաղաքաց նշանաւոր բերքերու, փանաւ-
քի մասին, կը նկարագրէ տեղացւոց բարբը,
զգեստուց տարազը, բնական կազմութիւնն,
քաղաքական կենցաղն: Տփղիսու մէջ ամե-
նէն շատ կը գովէ մեր ազգայնոց սպազար»ը
ուր կ'ըսէ զինքն և արծաթեղենաց կրպակ-
ներ շատ կարն: Աղնուութիւն չունենար Հա-
յուն ներկայ պատմութիւնը ներկայացընել
այնպէս ինչպէս որ է. և կ'ուզէ իտալացւոց
առ Հայս ունեցած համակրանքն ընել. էջե-
րով աննպաստ կը խօսի մեր ազգայնոց մա-
սին, և իր տեղեկութիւնը կ'առնուս միամիտ
և անճարագատ աղբիւրներէ: Եւ ցաւալի է
ըսելն որ այսպիսի լուրջ թերթ մը ծայրայեղ
սխալներու մէջ կը սայթաքի. և մեր ազգա-
յնոց այնպիսի վերքեր կը պատճառէ, որոնք
կարելի է մաշացու և վնասակար լինին այն
ազգին, որուն վրայ կը գուրդողորար իրենց
սիրելի Հայրն Ումպերթոյ: — Մննք Պ.
Կուլիէյմովն ազգիս վրայ զովասանք և զը-
րուատիք յսելու կարծան չէինք զգար, բայց
և բնաւ չէինք սպասեր անիտա վիրաւորանք

մը, և ողորմելի նկարագիր մը, որ երբեք
խալ մամուլը կրթութեան և ազնուութեան
հետ չի միանար:

ECHOS D'ORIENT (3^e année. — N^o. 6):
— Գաղղիական Հանդիսիս մէջ (էջ 326) գրա-
նուած « Un nouvel — *Oriens Christianus* — »
յօդուածն՝ իր մեր մասին մի գիտողութեամբ
ուշադրաւ կ'ըլլայ, և զոր աւելորդ չենք համա-
րիւր մեր պրակին մէջ ներկայացընելու: Բայց
Հանդիսին այդ գիտողութեան վրայ դեռ չի
խօսած, կարեւոր կը գանենք յօդուածին
վերնագիրը (որ գիտողութեան հետ առընչու-
թիւն ունի) մեկնելու, պարզելու: 1722ին
Փարիզու մէջ տպագրական յայտարարու-
թեամբ, կը ծանուցուի, որ քիչ ատենէն լոյս
կը տեսնէ « *Oriens christianus et Africa* »
անուամբ մեծակալ երկսիրութիւն մը. որ
պիտի ներկայացընէր ընդհանուր ցուցակ մը
Արեւելեան և Ափրիկեան Եկեղեցեաց
և նաեւ անոնց ունեցած եպիսկոպոսները, վար-
դապետները իրենց տիրոջոսով և իշխանու-
թեան սահմանով, և վերջապէս ամբողջ վա-
նորէից վիճակագրութիւնը: Այսպիսի գործի
մը կը ձեռնարկէ գաղղիացի եկեղեցական մը,
բայց մահը վրայ հասնելով, գործը կիսակա-
տար կը մնայ: « Էքօ տ'Օրիան » ցոյց կու
տայ նոյն գործին բազմաթիւ թիրութիւննե-
ր, և հրաւէր կը կարգայ ամէն ազգաց, որ
ձեռնարկեն անոր նման գործի մը, բայց ա-
ւելի կարգաւորեալ և կատարեալ. և ամենէն
առաջ հրաւէր կը կարգայ Հայ եկեղեցւոյ,
Կը գրէ.

« Բրիտանեայ Հայաստանը վիճեցնող Պ. Դա-
ցարոս Ալազգեմիտոյ մէջ ունի ազանչելի կերպով
կազմակերպուած գիտնոց Միասնութիւն մը.
որ կարող է քիչ ժամանակուան մէջ ի լոյս
ընծայել Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ վիճակա-
գրութիւնը: Ինչու Միտիթարայ հմուտ և ծրա-
ւան աշակերտներն չի սկսին ձեռնարկելու այդ
գեղեցիկ, հոյակապ հեղինակութեան, և պատե-
րինց քրիստոնեայ ազգին Բաւական է որ ա-
նոնք կ'ամենաւն: Եւ անշուշտ կ'ուզեն, բայց կը
համարձակեմ խնդրել իրենցմէ, որ « *Armenia
christiana* » (Քրիստոնեայ Հայաստանը) Հայե-
րէն չի հրատարակեն »:

Ինչպէս հրաւէրն՝ նոյնպէս նաեւ խնդրանքն
լաւ է: Եւ ճիշդ է որ այսպիսի հոյակապ գործ
մը առանձնականաց գործը չէ, այլ միաբա-
նութեան մը: Այն պէտք է բազմաթիւ աշ-
խատակաց խմբագրութեամբ կազմի ու պա-
տրաստուի, բայց գործն անխալ, և պահա-

տելի, հետաքրքրական և օգտակար ըլլալու համար, կղզիացեալ միաբանութիւն մը իր ամբողջ հին և նոր մատենադարանի օգնութեամբն իսկ, կարող չէ զայն զլուծ հանել, եթէ մեր արեւնակից հմտ ա միաբաններն և գիտուն աշխարհական դասակարգն, կարելոր թղթակցութեամբ չի մանկակցին այդ հոյակապ գործին, որ ինչպէս կը յայտնէ պաղղիացի հանդէսը, պատել է Հոյ Եկեղեցւոյ : Այսպիսի գործի մը ատաղձը արդէն մեր բունիքուն հեղինակներէն մին պատրաստած ըլլալով, կարելի է զայն յառաջ մը լրացնել խմբագրական ժողովոյ աշխատութեամբ : Եւ իրոք միջ աղջն ասկից աւելի կարելոր հոյակապ գործերու սովն կը զգայ - գոր օրինակ, ընդարձակ համայնագիտական կատարեալ բառարան մը - գաւառական բառերու լրակատար բառարան մը - Ժամանակակից ազգային ընդարձակ պատմութիւն և այլն : որոնք առ այսմ մեզի համար ամենէն կարեւորներն են - բայց տաղից կազմեն, ունենալով բաղձակողմանի դժուարութիւններ, անոնք չեն հրատարակուիր - բայց « Բրիտանիոյ Հայաստանը » զիւրին լինելով, կարելի է զայն ի լոյս ընծայել և ցոյց տալ Եւրոպայի՝ Հայ ազգին հասարակ հովուականներն, հովիւներն, և անոր զարդերն՝ վանորայք, եկեղեցիք, ուխտատեղիք, դարբար, կորդապ դեռնողած : Որեմի մը մնայ կամը մը օկսելու, սիրա՝ աջակցելու :

ROULETTINO. — Այս հանդէսը իտալերուով կը հրատարակուի ի Հռոմի՝ զատաշխարհապրակտն է . իր մասնաճիւղին մէջ շատ լուրջ և հմտակից հանդէսներէն մին է . վերջին պարկին մէջ (թիւ 11) մեր ազգին վրայ ցանուցել տեղեկութիւններ կը զբոսնենք, և ընդհանրապէս կը խօսի մեր ցեղին

1. Այս մեծ ցեղն կոչի նաեւ Կովկասեան, Սպիտակ կամ Հնդ-ատլանտեան ցեղ : Մարդկային ցեղի մէջ՝ առ թէ մոտաբանական և թէ ֆիզիքական աեսակէտով, ամենէն գերազանցն է . և մարդկային յառակողիմութեան մեծ մասը ասոր կը վերագրուի : Այս ցեղի ֆիզիքական բնորոշ յատկութիւնքն են . հասակ փոփոխական, ընդհանրապէս միջակ կամ բարձր, բայց ոչ գանձ : Մորթն վարդազանգ սպիտակ երբեմն թիւագոյն : Մազերն երկայն, շատ անգամ գանգոտ, սեւ, չաղանակազոյն կամ խաբառալ (քիչ անգամ կարմիր) ընտա արթային (Մորաք) խիտ և նայն գոյններով . մարմինն՝ ընդհանրա-

մարմնական կազմութեան մասին, իր յօդուածն որ նախընթաց պրակէն կը սկսի, ընդհանուր ուսումնասիրութիւն մըն է Եւրոպական ցեղերու . յօդուածագիրն է Փ. Մ. Փասանդիդ . որուն ուսումնասիրութիւնը բովանդակած է նոյն Հանդիսին 92 մեծագիր էջերու մէջ (թիւ 9, 10, 11) : Մեծք այդ յօդուածին վրայ տեղեկութիւն չի տուած, շատ կը համարինք փոքրիկ տեղեկութիւն մը տալ մեր ազգին բնախօսականին . ըստ բանիբուն և երեւելի մարդաբանից . մեր ազգը Միջերկրական մեծ ցեղին կը պատկանի : — Այս ցեղը հետեւեալ հինգ խմբերու կը բաժնուի . և են . Ա. — Բասկեանք, բնիկը Սպանիոյ . Բ. — Կովկասացիք, բնիկ Կովկասի . Գ. — Վանականք, բնիկ Հիւսիսային և արեւելիս Արիկիոյ . Դ. — Սեմականք, բնիկ հարաւ-արեւմտեան Ասիոյ և Մայրա կղզւոյ, և բաց աստի աշխարհիս ամէն կողմն ցրուած կը գտնուին . Ե. — Հնդ-աւրոպացիք, բնիկը Հիւսիսային Հնդկաստանի, Աֆրիկայիստանի, Արեւմտաստանի, Հայաստանի, Պարսկաստանի, Փոքր Ասիոյ և Եւրոպիոյ : — Հնդեւրոպական ցեղին մէջ կը գտնուին ամենէն քաղաքակրթ զգալիքն . այս ցեղը երկու խմբերու կը բաժնուի, մին արեւելեան, միւսն արեւմտեան : Արեւելեան խմբին մէջ կը գտնուին, ա. Հնդկաստանի Հնդիկները, Բ. Հայք, Պարսիկք, Քիւրդք և այլն : Իսկ երկրորդ խմբին մէջ կը գտնուին, ա. Եգիպտ, Բ. Լատինք, Գ. Յունք, Դ. Ալբանացիք, Ե. Կերմանացիք, Զ. Սլաւներ, Է. Խառնածին ժողովուրդք : — Հայք Պարսկացի հետ կը նկարագրուին . հասակ միջին, մորթ ընդհանրապէս թխագոյն . մազերն՝ չաղանակազոյն, մորուք խիտ և ուռնացեալ . քիթ մեծ . գանկ ձառնեւ, ճակատ՝ միջին աստիճանի բարձր . աչք՝ մեծ . լրթունք բարակ . կզակ՝ նեղ . վիզ՝

պէս մազոտ, մանաւանդ մարդկանց Ծակատ բարձր : Պանկի ընդհանրականութիւնը մօտ է 1500 խ . հըք երես երկայնաձեւ, այտաճիւր (Ossygomatique) քիչ մը դուրս ցցուած, դիմանկեան աստիճանը բարձր, աստիճանը փոքր և ուղղահայեաց : Նրթունք՝ բարակ և վարդազոյն, կզակ՝ խիշք : Աք՝ սեւ : Թուխ կամ կապտազոյն, և կամ այս գոյներու գանգազան աստիճաններով . բերանն՝ հորիզոնական . քիթ՝ շատ դուրս ցցուած երբեմն ալ արծուային :

2. Հմտ. Francesco Rouleaux. Storia del progresso umano, versioni di Giovanni e Riccardo Canestrini. 42 87, 88 և 98 :

ոչ երկայն: Դրամանկարն լուրջ: Մեր ազգին
ցեղական ծագման վրայ ներկայ տեղեկու-
թիւնը բաւական համարելով, կ'անցնինք վե-
րոյնչեալ թերթին նոր մարդաբանական ու-
սումնասիրութեան: Սա ամերսամասն տեղե-
կութիւն կու տայ մեզ զբրկից ազգաց՝ Ռու-
սաց, Պարսից, Թրքաց. և ընդհանրապէս իր
տեղեկութիւնք կը քաղէ գիտնական Ռայփ-
լէյնէն¹. Ըստ այս մարդաբանին.

« Հայերն բարձրագոյն (ipsioefala) հնաեւ
այն ամէն տեղ ուր դարերով կը գտնուին՝ բաժ-
նուած բուն բնաշխարհէն, կը պահեն իրենց
կազմած ինտիկն տիպարն: Ամենէն խե-
ւացի ժողովուրդն է. աշխատասեր, և արեւե-
լեան ազգաց մէջ ամենէն խաղաղասերն է. վա-
նաւորութեան մէջ և սակաւապէսութեամբ
ճշդէից կը նմանի: Ընդ ամէնէն 5 միլիոն են.
կէսէն քիչ մը աւելին Թուրքիոյ մէջ կը գրա-
նուին, իսկ մնացածն կովկասի և Պարսկաստա-
նի մէջը »:

Մեր վրայ ուրիշ ոչ սակաւ ճանապարհոր-
դագրութեանց մէջ կը գտնենք այս տեսակ
տեղեկութիւնք: Մարդաբանական տեսակե-
տով Շանոր իր ուղեգրութեանց մէջ, մեր
մասին շատ խօսած է². — Ռ. Փօն Էրէրդ
գերմանացի գիտնականն « Եղովկաս և ինչ ժո-
ղովուրդն » վերնագրով գրքին մէջ, Հայերը
կ'անուանէ գնահատող, տաղանդաւոր, շա-
հասեր, շրջակայեաց, ճարտար, փառական.
անցնելով բնախօսական տեղեկութեանց,
կ'ըսէ որ կովկասեան ազգաց մէջ ամենէն
բարձրագոյն Հայերն են. և ինքը ինչպէս
ուրիշ գիտնականք, գլխով բարձրութիւնը ու-
ղեղի շատութեան նշան կ'ընդունին: Կը
գրէ.

« Եթէ քղեիք չափն հոգեկան տաղանդին առ-
աւելանին համար նշանակութիւն մ'աւելն, պէտք
ենք խոսողմանիք թէ երկայն և լայն գլուխն
աւելի հանճարեղ կ'ըլլայ: Բայց կ'երեւի թէ
բարձրութեան աւելի նշանակութիւն ունի:
Ետքմարդոցն շատ երկայն: Բայց յարկաւեւ
է. անոնք շատ բխմաւոր են: Մինչդեռ բարձրա-
գոյն Հայերն, կաւկասեան ցեղին ամենէն տա-
ղանդաւորն կ'երևան »:

Կ'անցնինք ուրիշ տեղեկութեան մը, որ
մեր շոշափած ինգրոյն հետ կապակցութիւն
ունի: Անցեալ տարի հոկտեմբեր 3ին Պեռլինի
աշխարհագրական կոնառին ժողովոյն մէջ,
Հոլապուտը պրոֆ. Ռոտլիֆ Վիլխուլ, իր խօ-
սի Լեման և Պէլք գիտնականաց հետագո-
տութեանց վրայ զորս կատարեցին Հայաս-
տանի մէջ: Մեր երկիրը բաղդատմամբ ուրիշ
տեղեկաց, Հնագիտական և աշխարհագրական
տեսակետով դեռ շատ քննուած չէ: Լեման
ինչպէս արդէն ազգիս բանասիրաց ծանօթ
է, իրեն հետագոտութիւնը կատարեց Վա-
նայ մէջ: Տեղացիք անբաւ միջոցաւ օգնեցին
այդ գիտնականին հետագոտութեանց. և նա
կրցաւ եկեղեցեաց հիմանց մէջ գտնուած քա-
րերու վրայի՝ խիստ հետաքրքրական արձա-
նագրութիւններն ընդօրինակելու: Ճշմարիտ
է որ սոյն արձանագրութիւնք, մեր ազգին հետ
յարաբերութիւն չունին, այլ կը վերաբերին
Եւքսինեան Պոնտոսի Քաղդէացւոց, բայց
ինչ որ այ լինի, անոնք մեր աշխարհին նախ-
նի ժամանակներէն մնացած Հնագիտական
գանձերն են: Պրոֆ. Պէլք շնորհունիք որ
Նոյայ տապանը հանգչած լինի Արարատ լե-
ռան վրայ, փասն զի ըստ իր գիտութեան,
նոյն աստիճանին այդ անունը կը տրուէր ամ-
բող իշխախային Հայաստանի (Uratn) և
կը յիշատակէ տեղացի ասանդութիւննե-
րը: Որոնց համեմատ՝ փոխանակ Արարատ
լեռան, Լուրու երկրին մէջ Դիտիք լեռն է, ուր
հանգչած է Նոյայ տապանն: Նոյն հետագո-
տութեանց աստեւ, կը գտնեն արձանագրու-
թիւն մը՝ երկվեզուեան, այսինքն քաղդէա-
կան և ասորական բեւեռագրերով, և այդկից
կը հանեն նոյն անունները: Վերոյիւեալ ժո-
ղովոյն աստեւ, քննութիւնք մեր ազգին հետ
կապակցութիւն ունենալով, կը խօսուի նաեւ
մեր բնախօսական մասին: Եւ Հայքս կը
ներկայացուի ճնդ-եւրոպական ազգ մը,
կարճագոյն³ (brachioefali) մաղ՝ սեւ, ալք
թուխ, մարթ սպիտակ: Լեզուի մասին որոշ
զաղափար մը չեն ունենար⁴:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

1. Հմմտ. Z. BIPLEY, "The Races of Europe, a sociological study", New York, Appleton and Co., 1899, in 8°.

2. Հմմտ. Bollettino N. 11. էջ 1045.

3. Հմմտ. Բագմակիպի ուղեւորութիւն Շան-
տի յարեւելս. 1894. Հատ. ԽԹ - 1896. Հատ.
ԽԿ:

4. Der Kaukasus und seine Völker. Լայբ-

ցիկ 1887: Որպէն համառոտութիւնն և աղելի
մեր թասին եղած տեղեկութիւնք թարգմանուած
են. Հանգիս անտօրեայի առաջին արուան
պրակնեղուն մէջ. էջ 83. 1887:

5. Շատ գիտնականք զմեզ բարձրագոյն
(ipsioefala) կ'ընդունին. ուստի հակասական
է, այդ կաճառին մեկնութիւնք:

6. Հմմտ. Bollettino. Roma, էջ 44. 1900: